շատերը ասում են, որ Ղազվինը նախկին Արշակաւանն է (Arsaciè), Պարթեւների առաջին կայսր Արշակի անունով, որ նա Յոյների անուանած Բաձէան (Ragea) է, որ Ս. Գրքի մէջ կոչուած է Մեդիայի Բաձէան։ Ոմանք այն կարծիքի են, որ նա Սարաբոնի Կաղբիրան (Cazbira) է։ Ասըմբէգ, մի հայ հեղինակ, բոլորովին ուրիշ կարծիք ունի. նա ասում է, որ այդ քաղաքը ստացել է իր կոչումը Ղաղբին Թագաւորի անունից։„

Թէ ո՞վ է այդ հայ հեղինակը, Ասըմբէգը, եւ ե՞րբ է գրել, դժբախտաբար ոչ մի տեղեկութիւն չունենք այդ մասին։

Մնում է այժմ լուծելու մի գլխաւոր խնդիր. ո՞րքան էր տարագրեալների կամ գաղթականների թիւը։ Մենք տեսանք, որ ընդհանուր գաղթականութիւնից (1605 թ.) առաջ եւ յետոյ Շահաբբասը մի քանի անգամ, թէեւ մանր հատուածներով, գաղթեցրեց Հայերին. տեսանք նոյնպէս, որ գաղթականների ընդհանուր բանակը չուեցնելուց յետոյ, Շահաբբաս իմանալով, որ շատերը թագնուել են անտառներում, քարայրներում, լեռների կիրճերում, զօրք ուղարկեց նրանց նոյնպէս գաղթեցնելու կամ կոտորելու։ Հայ պատմագիրներից ոչ ոք որոշակի չէ յայտնում գաղթեցրած ժողովրդի թիւն. չկան այդ մասին տեղեկութիւններ եւ Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագիր յիշատակարաններում, ինչպէս յայտնում է Ց. Տէր Յովհաննեանը։ Առաքել վարդապետը յայտնում է միայն առաջին գաղթականների, Արծկէ քաղաքից գերուածների թիւն — 23.000